

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է Ազգային Ժողովի կողմից
11 նոյեմբերի 1998 թ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԳՎԱԾ 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ (այսուհետ՝ հուշարձաններ) են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:

ՀՈԳՎԱԾ 2. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներառում է Սահմանադրությունը, սույն օրենքը, այլ օրենքներ ու իրավական ակտեր:

ՀՈԳՎԱԾ 3. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակն է՝

- ա) հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերի սահմանումը.
- բ) այդ գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների կարգավորումը: Սույն օրենքի հիմնական խնդիրներն են՝
 - ա) հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական քաղաքականության հիմնադրույթների սահմանումը.
 - բ) հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման հարցերի կանոնակարգման սկզբունքների սահմանումը.
 - գ) հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավասությունների սահմանումը.
 - դ) հուշարձանների՝ որպես անշարժ գույքի հատուկ տեսակի նկատմամբ սեփականատիրության, տնօրինման եւ օգտագործման առանձնահատկությունների սահմանումը:

ՀՈՂՎԱԾ 4. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի օբյեկտներն են՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն իրենց պահպանական գոտիներով, դրանց շրջապատող պատմական միջավայրը՝ կառուցապատումը, բնական կամ արհեստական լանդշաֆտը:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հայ ժողովրդի պատմամշակութային հուշարձանների պահպանությունն իրականացվում է այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի շրջանակներում:

ՀՈՂՎԱԾ 5. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի սուբյեկտներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

բ) պետական կառավարման հանրապետական, տարածքային եւ տեղական ինքնակառավարման մարմինները.

գ) հուշարձանների սեփականատերերը, օգտագործողները.

դ) հուշարձանների պետական հաշվառման, պահպանման, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման հետ առնչվող իրավաբանական ու ֆիզիկական անձինք:

ՀՈՂՎԱԾ 6. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական եւ տեղական նշանակության:

Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական եւ հոգեւոր մշակույթի նշանակալի հուշարձանների բարձրարժեք, հնագույն, տիպական կամ հազվագյուտ նմուշները:

Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որեւէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող հուշարձանները:

Հուշարձանների դասակարգումը կատարում է հուշարձանների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Պատմամշակութային քացառիկ արժեք ունեցող հուշարձանները միջազգային մակարդակով սահմանված չափանիշներով կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում:

Հուշարձանները դասակարգվում են նաեւ ըստ բնույթի՝

ա) հնագիտական՝ քարեդարյան կայաններ, քարայր-կացարաններ, հնագույն եւ միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ, դամբարանադաշտեր, գերեզմանոցներ, մեգալիթյան կոթողներ, ժայռապատկերներ, վիմագրական հուշարձաններ, հնագիտական մշակութային շերտեր.

բ) պատմական՝ պատմության եւ մշակութային նշանավոր իրադարձությունների եւ նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ, կոթողներ, հուշահամալիրներ, գերեզմաններ.

գ) քաղաքաշինական եւ ճարտարապետական՝ պատմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցապատման հատվածներ, բնակելի պալատական, պաշտամունքային, հասարակական, արտադրական եւ ճարտարագիտական կառույցներ, ժողովրդական տներ, ճարտարապետական կոթողներ.

դ) մոնումենտալ արվեստի՝ մոնումենտալ քանդակագործության, գեղանկարչության եւ դեկորատիվ արվեստի նմուշներ:

ՀՈՂՎԱԾ 7. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ, ՌԱՍԱՅԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՒՄԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում արգելվում է քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականությունը:

ԳԼՈՒԽ II

ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 8. ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը.

բ) հաստատում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի հանրապետական եւ մարզային պետական ծրագրերը.

գ) ապահովում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի ֆինանսավորումը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին.

դ) հաստատում է անշարժ հուշարձանների պետական ցուցակները, դրանց հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման կարգը.

ե) ստեղծում է պատմամշակութային ու բնապատմական արգելոցներ եւ հաստատում դրանց կանոնադրությունները.

զ) միջազգային նորմերի սահմաններում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ քարոզչական միջոցառումների իրականացմանը.

է) թույլտվություն է տալիս հանրապետական նշանակության հուշարձանները տեղափոխելու եւ փոփոխելու համար.

ը) իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

ՀՈՂՎԱԾ 9. ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Լիազորված մարմինը՝

ա) մասնակցում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձեւավորմանը, Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում պետական ծրագրերի, որոշումների նախագծեր, հաստատումից հետո կազմակերպում եւ վերահսկում է դրանց իրականացումը.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատման է ներկայացնում հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման գիտամեթոդական կարգը.

գ) պետական վերահսկողություն է ապահովում հուշարձանների պահպանության եւ օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.

դ) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական սեփականություն համարվող եւ չօգտագործվող հուշարձանների տնօրինումը, կատարում դրանց ամրակայման, վերականգնման եւ բարեկարգման աշխատանքները.

ե) գրանցում եւ վերահսկում է հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքի եւ օգտագործման ձեւի փոփոխումները.

զ) միջազգային նորմերի սահմաններում հաշվառում եւ ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական հուշարձանները, նպաստում դրանց պահպանմանը.

է) ստեղծում է պատմամշակութային արժեքների գիտատեղեկատու շտեմարան, հրատարակում կատալոգներ, ուսումնական, գիտահետազոտական, ճանաչողական նպատակներով ապահովում է հուշարձանների եւ դրանց վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը.

ը) վարում է հուշարձանների պետական հաշվառումը (կադաստրը).

թ) կազմում եւ սահմանված կարգով հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը ու սահմանում դրանց պահպանության ռեժիմը.

ժ) առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ պատմամշակութային արգելոց ստեղծելու վերաբերյալ.

ժա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համաձայնություն կամ մասնագիտական եզրակացություն է տալիս հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների հատակագծման, կառուցապատման, ինչպես նաեւ հուշարձան համարվող առանձին շինությունների եւ համալիրների ամրակայման, վերականգնման, փոփոխման եւ բարեկարգման նախագծերի վերաբերյալ, դրանց իրականացման ընթացքում վերահսկում է հուշարձանների անվթարության ապահովումը.

ժբ) թույլտվություն է տալիս հուշարձանների հետախուզման եւ պեղման աշխատանքների համար, գրանցում դրանք եւ վերահսկում դրանց կատարման ընթացքը.

ժգ) արգելում կամ դադարեցնում է հուշարձանի պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, ինչպես նաեւ շինարարական, գյուղատնտեսական եւ այլ աշխատանքները, եթե դրանք վնասել են, կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին.

ժդ) նպաստում է ոչ պետական սեփականություն համարվող հուշարձանների պահպանական միջոցառումների իրականացմանը.

ժե) իրականացնում է սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

ՀՈԳՎԱԾ 10. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական կառավարման տարածքային մարմինները՝

ա) մարզի տարածքում ապահովում են վերահսկողություն հուշարձանների պահպանության եւ օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.

բ) օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում կազմակերպում են լիազորված մարմնի համապատասխան ծառայությունների եւ ստորաբաժանումների ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ եւ համաձայնեցված գործունեություն՝ հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում.

գ) միջոցներ են ձեռնարկում մարզի տարածքում հուշարձանների պահպանության եւ օգտագործման ուղղությամբ.

դ) մասնակցում են մարզի բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման, հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր կազմելու աշխատանքներին:

ՀՈԳՎԱԾ 11. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) սահմանված կարգով կազմում են բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը.

բ) աջակցում են պետական սեփականություն համարվող եւ չօգտագործվող հուշարձանների պահպանությանը.

գ) սահմանված կարգով կազմակերպում են տեղական նշանակության հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները.

դ) հանրապետական նշանակության հուշարձանների նկատմամբ իրականացնում են պետության կողմից պատվիրակված լիազորությունները:

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնում են շինարարական, գյուղատնտեսական եւ այլ աշխատանքները, եթե դրանք վտանգում են կամ կարող են վտանգել հուշարձանի ու դրա պահպանական գոտու անվթարությունը եւ այդ մասին տեղեկացնում լիազորված մարմնին:

զ) լիազորված մարմնի համաձայնությամբ օգտագործման կամ վարձակալության կարող են հանձնել համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերը եւ շինությունները:

է) շինարարական, գյուղատնտեսական եւ այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ հայտնաբերելիս կասեցնում են այդ աշխատանքներն ու այդ մասին անհապաղ հայտնում լիազորված մարմնին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ը) ապահովում են համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը:

թ) հուշարձանների պահպանական գոտիներում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի եւ շինությունների սեփականատերերի եւ օգտագործողների հետ կնքում են հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր), որի մեկ օրինակը ներկայացնում են լիազորված մարմնին:

ԳԼՈՒԽ III

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈՂՎԱԾ 12. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր հուշարձանները ենթակա են պետական հաշվառման՝ անկախ սեփականության ձեւից:

Հուշարձանների պետական հաշվառումը ներառում է հուշարձանների հայտնաբերումը, ուսումնասիրումը, հաշվառման փաստաթղթերի ստեղծումը, պետական ցուցակների կազմումն ու հաստատումը:

Հուշարձանների պետական հաշվառումն իրականացնում է լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հուշարձանների պետական հաշվառման փաստաթղթերը պահպանվում են անժամկետ:

ՀՈՂՎԱԾ 13. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՅՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հուշարձանների պետական ցուցակները հիմնական փաստաթուղթ եւ իրավական հիմք են՝ օբյեկտին հուշարձանի կարգավիճակ տալու եւ պետության կողմից պահպանության վերցնելու համար:

Հուշարձանների պետական ցուցակները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազորված մարմնի ներկայացմամբ:

Լիազորված մարմինը հուշարձանը պետական ցուցակում ընդգրկելու մասին տեղեկացնում է պետական կառավարման տարածքային եւ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ըստ հուշարձանի գտնվելու վայրի, եւ հուշարձանի սեփականատիրոջը կամ օգտագործողին:

Հուշարձանների պետական ցուցակները պաշտոնապես հրապարակվում են դրանց պատրաստ լինելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՀՈՂՎԱԾ 14. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՅՈՒՑԱԿՆԵՐՈՒՄՆՈՐ ՕԲՅԵԿՏ ԸՆԴԳՐԿԵԼԸ ԵՎ ՅՈՒՑԱԿԻՑ ՀԱՆՆԵԼԸ

Հուշարձանների պետական ցուցակներում նոր օբյեկտ ընդգրկելը եւ այդ ցուցակներից հանելը կատարվում է փորձագիտական եզրակացության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ IV

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՀՈԳՎԱԾ 15. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը ներառում է՝

- ա) հուշարձանների հայտնաբերումը եւ պետական հաշվառումը.
- բ) հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը.
- գ) պատմամշակութային արգելոցների ստեղծումը.
- դ) պատմական բնակավայրերի, դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմումը.
- ե) հուշարձանների եւ դրանց տարածքի պահպանության ապահովումը եւ վերահսկումը.
- զ) շինարարական, գյուղատնտեսական եւ այլ աշխատանքների իրականացման ընթացքում հուշարձանների ու դրանց պատմական միջավայրի անվթարության ապահովումը.
- է) հուշարձանների պեղումների, ամրակայման, վերականգնման, նորոգման աշխատանքների եւ օգտագործման կարգերի սահմանումը.
- ը) հուշարձանների պահպանության քարոզչությունը:

ՀՈԳՎԱԾ 16. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ

Հուշարձանի տարածքը իր զբաղեցրած եւ պատմականորեն ու գործնական առումով դրա հետ կապված եւ սահմանված կարգով առանձնացված հողատարածքն է:

Հուշարձանների եւ դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների բացահայտման, նպատակային օգտագործման եւ բարենպաստ տեսողական ընկալման նպատակով սահմանվում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգ եւ օգտագործման ռեժիմ:

Հուշարձանների պահպանական գոտիների համակարգը կարող է ներառել՝

- ա) հուշարձանի պահպանության գոտին.
- բ) կառուցապատման կարգավորման գոտին.
- գ) լանդշաֆտի պահպանման գոտին:

Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների եւ մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման եւ կառուցապատման նախագծերի համար: Նշված գոտիների տարածքներում հողային, շինարարական եւ այլ տեսակի աշխատանքների, ինչպես նաեւ տնտեսական գործունեության իրականացումը կատարվում է լիազորված մարմնի թույլտվությամբ:

Հուշարձանի պահպանական գոտիների տարածքը դասվում է պատմամշակութային նշանակության հողերի կատեգորիային եւ ունի այդ հողերի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավիճակ եւ օգտագործման ռեժիմ:

Հուշարձանների տակ գտնվող, ինչպես նաեւ դրանց պահպանության գոտու եւ պատմամշակութային արգելոցների հողերը ոչ նպատակային օգտագործման համար հետ վերցնելն արգելվում է: Այդ հողերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԳՎԱԾ 17. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՑՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԸ

Պատմամշակութային արգելոցները հուշարձանների այն համակառույցները, համալիրներն եւ հուշարձանախմբերն են՝ իրենց շրջակա բնապատմական միջավայրով, որոնք պատմական, գիտական, գեղարվեստական, ազգագրական հատուկ արժեք են ներկայացնում:

Պատմամշակութային արգելոցն ստեղծվում է հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների, բնական եւ պատմականորեն ձեւավորված արհեստական լանդշաֆտի, պատմամշակութային համալիրի եւ դրա պատմական միջավայրի պահպանության նպատակով:

Պատմամշակութային արգելոց ստեղծելու առաջարկությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն են ներկայացնում լիազորված մարմինը, պետական կառավարման տարածքային եւ տեղական ինքնակառավարման մարմինները:

Պատմամշակութային արգելոցի տարածքի հողօգտագործումը կարող է թույլատրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՒՎԱԾ 18. ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎԹԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Բնության հատուկ պահպանվող տարածքներում հուշարձանների պահպանությունն ապահովում են այդ տարածքները տնօրինող պետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված տարածքների սահմաններում գտնվող հուշարձաններին եւ դրանց բնապատմական միջավայրին առնչվող բոլոր աշխատանքները համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

ՀՈՒՎԱԾ 19. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ՈՒՆԵՅՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ, ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՍԱՉԱՅՆԵՅՈՒՄԸ

Հուշարձաններ ունեցող բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների հատակագծման, կառուցապատման եւ վերակառուցման նախագծային առաջադրանքները եւ նախագծերը համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Պատմականորեն ձեւավորված կամ հուշարձաններով հարուստ բնակավայրերի զարգացման ընթացքում հուշարձանների եւ դրանց պատմական միջավայրի պահպանության համար բարենպաստ պայմաններ ապահովելու, դրանց քաղաքաշինական եւ գեղագիտական դերը պահպանելու նպատակով եւ ելնելով նոր կառուցապատում իրականացնելու համար որոշակի պայմաններ սահմանելու նկատառումից՝ կազմվում է բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծ:

Բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագծերի առաջադրանքները կազմում է լիազորված մարմինը եւ սահմանված կարգով հաստատում պետական կառավարման տարածքային մարմնի հետ համատեղ:

ՀՈՒՎԱԾ 20. ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎԹԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտն ստանում է նորահայտ հուշարձանի կարգավիճակ եւ պահպանվում է մինչեւ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու եւ ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաեւ գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՒՎԱԾ 21. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԶԱՆԳՄԱՆ ԱՐԳԵԼՈՒՄԸ: ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Հուշարձանների քանդումն արգելվում է:
Հանրապետական եւ տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն

բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ, իսկ տեղական նշանակության հուշարձանների փոփոխումը՝ պետական կառավարման տարածքային մարմինների թույլտվությամբ:

Հուշարձանների տեղափոխման եւ փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա:

Նախքան հուշարձանը տեղափոխելը կամ փոփոխելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ դրանք կատարելու ընթացքում, լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիտական ուսումնասիրման, չափագրման եւ լուսանկարման աշխատանքները:

Սույն հոդվածով նախատեսված աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը կատարվում են հուշարձանի տեղափոխման կամ փոփոխման թույլտվություն ստացողի հաշվին:

ՀՈԳՎԱԾ 22. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ՆԵՐԱՌՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՍԱՐ ՀՈԳԻ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ, ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՍԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ ԵՎ ԱՅԴ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆՎԹԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական եւ այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Եթե նշված աշխատանքները կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունը եւ անվթարությունը, նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցներով իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման աշխատանքներ, բացառիկ դեպքերում՝ տեղափոխում եւ լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխատանքներ:

ՀՈԳՎԱԾ 23. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության եւ այլ պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձինք իրենց անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ, հովանավորությամբ, նվիրատվությամբ, ֆինանսական եւ նյութատեխնիկական օգնությամբ կարող են աջակցել հուշարձանների հայտնաբերման, պետական հաշվառման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման աշխատանքներին, կարող են ներկայացնել եւ քննարկման դնել բնագավառի վերաբերյալ մասնակի կամ համալիր առաջարկներ, ծրագրեր:

ԳԼՈՒԽ V

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ՀՈԳՎԱԾ 24. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՄԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հուշարձանների հետախուզում եւ հնագիտական պեղումներ կատարվում են՝

ա) պատմության, հնագիտության, ճարտարապետության եւ արվեստի պատմության, ազգագրության եւ այլ բնագավառներում՝ գիտության զարգացման նպատակով.

բ) հուշարձանների կամ դրանց պահպանության գոտիների տարածքներում գյուղատնտեսական, շինարարական կամ այլ աշխատանքների ընթացքում հուշարձանները ուսումնասիրելու, վավերագրելու, պահպանելու, իսկ բացառիկ դեպքերում՝ տեղափոխելու նպատակով.

գ) հուշարձանների ամրակայման, վերականգնման եւ դրանց տարածքի բարեկարգման նախագծեր կազմելու եւ իրականացնելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 25. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում հուշարձանների հետախուզում եւ հնագիտական պեղումներ կատարելու թույլտվություն տալիս է լիազորված մարմինը՝ միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ՀՈՂՎԱԾ 26. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովը հուշարձանների հետախուզման ու հնագիտական պեղումների թույլտվության, նպատակահարմարության, արդյունավետության խնդիրները քննարկող եւ գիտամեթոդական եզրակացություններ տվող մարմին է, որը գործում է լիազորված մարմնին կից:

Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովում ընդգրկվում են պետական մարմինների ներկայացուցիչներ, գիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագետներ:

Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի եզրակացությունները լիազորված մարմնի կողմից հաստատվելուց հետո պարտադիր են հուշարձանների հետախուզում եւ հնագիտական պեղումներ իրականացնող իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար:

Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կազմը եւ կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազորված մարմնի ներկայացմամբ:

ՀՈՂՎԱԾ 27. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՉԵՌՆԱՐԿՈՂԸ

Հետախուզում եւ հնագիտական պեղումներ ձեռնարկողն աշխատանքների համալիր ծրագրի ամբողջական իրագործման ֆինանսավորողը եւ կազմակերպողն է: Նա սահմանված կարգով պատասխանատու է աշխատանքների ընթացքում հուշարձանների անվթարության ապահովման եւ պեղումներով հայտնաբերված հուշարձանների ամրակայման, գիտական վավերագրման եւ նյութերի ու արդյունքների հրապարակման համար:

Հետախուզում եւ հնագիտական պեղումներ ձեռնարկող կարող են լինել Հայաստանի Հանրապետության եւ այլ պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձինք: Հետախուզության եւ հնագիտական պեղումների կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հետախուզում եւ հնագիտական պեղումներ ձեռնարկող չի կարող լինել միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովը:

ՀՈՂՎԱԾ 28. ՀԵՏԱԽՈՒՉՄԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ

Հետախուզման եւ հնագիտական պեղումների ղեկավարը տվյալ հուշարձանը պեղելու համար թույլտվություն (քաց թերթիկ) ունեցող մասնագետն է:

Հետախուզման եւ հնագիտական պեղումների ղեկավարը պատասխանատու է ինչպես աշխատանքների արդյունավետության, այնպես էլ ամբողջ գործաշրջանի ընթացքում հուշարձանի պահպանությունը եւ անվթարությունն ապահովելու համար:

ՀՈՂՎԱԾ 29. ՀՆԱՎԱՅՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԵՂՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻԹՅՈՒՆԸ

Անթույլատրելի է հնավայրի՝ բնակատեղիների, դամբարանադաշտերի, ամրոցների ամբողջական պեղումը: Դրանց տարածքի մի մասն անհրաժեշտ է պահպանել հաջորդ սերունդների՝ առավել կատարելագործված մեթոդներով ուսումնասիրությունների համար:

Բացառություն են կազմում այն հնավայրերը, որոնք բնական կամ արհեստական գործոնների ազդեցությամբ դատապարտված են անխուսափելի եւ արագ ոչնչացման:

ԳԼՈՒԽ VI

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՈՒՄԸ, ՆՈՐՈԳՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 30. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հուշարձանների ամրակայման նպատակը տեխնիկական տարբեր միջոցներով դրանց հետագա քայքայման կամ ավերման կանխումն է:

Հուշարձանների նորոգման նպատակը դրանց տեխնիկական վիճակի պահպանումը եւ բարելավումն է՝ առանց հուշարձանի տեսքի փոփոխության:

Նորոգում է համարվում նաեւ հուշարձանների հարմարեցումը (ադապտացիան), որի նպատակն է առավել բարենպաստ պայմաններ ստեղծել դրանց ժամանակակից օգտագործման համար:

Հուշարձանների վերականգնման հիմնական նպատակը հուշարձանների սկզբնական կամ պատմականորեն ձեւավորված կերպարի մասնակի կամ լրիվ ամբողջացումն է՝ փաստագրական նյութերի գիտական, վերլուծական հիմնավորմամբ:

Քաղաքաշինական հուշարձանի, համակառույցների վերականգնման դեպքում կիրառելի է նաեւ դրա երբեմնի օրգանական տարրը կազմող եւ չպահպանված կառույցի գիտականորեն հիմնավորված վերստեղծումը՝ հուշարձանի ամբողջացման նպատակով:

Հուշարձանների ամրակայումը, նորոգումը եւ վերականգնումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքներն իրականացվում են լիազորված մարմնի թույլտվությամբ եւ վերահսկողությամբ:

Հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքների նախագծային առաջադրանքները եւ նախագծերը համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

ՀՈԴՎԱԾ 31. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ

Հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքների պատվիրատուներ են հուշարձանների սեփականատերերը եւ օգտագործողները:

Պետական սեփականություն համարվող եւ չօգտագործվող հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքների պատվիրատու կարող են լինել լիազորված մարմինը, պետական կառավարման տարածքային եւ տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության եւ այլ պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձինք:

ՀՈԴՎԱԾ 32. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂՆԵՐԸ

Հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքներն իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները եւ այն մասնագետները, որոնք ունեն համապատասխան լիցենզիա եւ տվյալ հուշարձանում աշխատանքներ կատարելու համար սահմանված կարգով տրված թույլտվություն:

ՀՈԴՎԱԾ 33. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվում են, եթե դրանք տարվում են հաստատված նախագծի, մեթոդաբանական կամ տեխնոլոգիական սկզբունքների խախտումներով, կամ եթե դրանց շարունակումը կարող է վտանգել հուշարձանի անվթարությունը: Աշխատանքները կարող են վերսկսվել բացահայտված խախտումները կատարողի հաշվին վերացվելուց հետո:

Աշխատանքները դադարեցնելու իրավունք ունեն լիազորված մարմինը եւ պետական կառավարման տարածքային մարմինը՝ տեղյակ պահելով լիազորված մարմնին:

ԳԼՈՒԽ VII

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐԲ

ՀՈՂՎԱԾ 34. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐԲ

Հուշարձանների նկատմամբ սեփականության հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

ՀՈՂՎԱԾ 35. ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր հուշարձանները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով չեն համարվում համայնքների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց սեփականությունը, Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

Պետական պատմամշակութային արգելոցները, դրանց մաս կազմող հուշարձանները, կառույցները եւ հողատարածքները չեն տարանջատվում եւ օտարվում:

Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող այն հուշարձանների ցանկը, որոնք ենթակա չեն օտարման, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(35-րդ հոդվածը փոփ. 03.05.03 ՀՕ-530-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 36. ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հուշարձանի սեփականատերը պարտավոր է՝

ա) ապահովել հուշարձանի պահպանությունը եւ անվթարությունը.

բ) սահմանված կարգով տալ հուշարձանի պահպանական պարտավորագիր լիազորված մարմնին՝ հանրապետական նշանակության հուշարձանի դեպքում, կամ պետական կառավարման տարածքային մարմնին՝ տեղական նշանակության հուշարձանի դեպքում.

գ) ապահովել հուշարձանի մատչելիությունն ուսումնասիրման եւ պահպանության վերահսկման համար.

դ) կատարել հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ դրանց նախագծերը նախապես համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ.

ե) հուշարձանը պահել բարեկարգ եւ մաքուր վիճակում, վերացնել օգտագործման ընթացքում հուշարձանին եւ դրա պահպանության գոտուն պատճառված վնասները.

զ) լիազորված մարմնին նախապես տեղեկացնել հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքի, դրա պահպանման եւ օգտագործման պայմանների փոփոխման մասին:

ՀՈՂՎԱԾ 37. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

Հուշարձանի օտարման դեպքում հուշարձանի սեփականատերն այդ մասին նախապես տեղեկացնում է լիազորված մարմնին:

Հուշարձանների օտարման վերաբերյալ բոլոր գործարքները գրանցում է լիազորված մարմինը:

ԳԼՈՒԽ VIII

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 38. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հուշարձանները գերազանցապես օգտագործվում են գիտական, կրթական, մշակութային եւ ճանաչողական նպատակներով, ինչպես նաեւ իրենց սկզբնական ու հարմարեցված (ադապտացիոն) գործառնական նշանակությամբ:

Հուշարձանների օգտագործումը տնտեսական եւ այլ նպատակներով թույլատրվում է, եթե այդպիսի օգտագործումը համապատասխանում է հուշարձանի բնույթին, չի վնասում հուշարձանի անվթարությունը, չի նսեմացնում կամ աղճատում դրա պատմական, գիտական եւ գեղարվեստական արժեքը:

Հուշարձանի տիրապետումը եւ օգտագործումը պետք է կատարվի դրա պատմամշակութային արժեքի բացառիկության եւ հնարավոր կորուստների անդարձելիության գիտակցմամբ:

Բացառապես գիտական, կրթական, մշակութային եւ ճանաչողական նպատակներով եւ օգտագործվում հին եւ միջնադարյան քաղաքատեղիները, բնակատեղիները, բերդչեմերը, ամրոցները, դամբարանադաշտերը, գերեզմանոցները, չգործող կամուրջները, ջրամբարները, այն եկեղեցիները, վանական համալիրները եւ այլ կառույցները, որոնք ենթակա չեն ամբողջական վերականգնման եւ օգտագործման՝ իրենց սկզբնական գործառնական նշանակությամբ, ինչպես նաեւ դրանց հետ առնչվող մոնումենտալ արվեստի ստեղծագործությունները:

Հուշարձանների օգտագործման նպատակը, բնույթը, դրանց փոփոխումները համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Հուշարձանն օգտագործողները, եթե իրենց կանխամտածված կամ ոչ կանխամտածված գործողություններով վնասել են հուշարձանի պահպանությանը, կորցնում են օգտագործման իրավունքը:

ՀՈՂՎԱԾ 39. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

Հուշարձաններն օգտագործման են տրամադրում դրանց սեփականատերը կամ օգտագործողը՝ կողմերի միջեւ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա, որը նախապես համաձայնեցվում է լիազորված մարմնի հետ: Թույլատրվում է նաեւ հուշարձանի ենթավարձակալություն, եթե այն նախատեսված է վարձակալական պայմանագրով:

Հուշարձանն օգտագործման է տրամադրվում իր տարածքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 40. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Հուշարձանն օգտագործող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք պատասխանատվություն են կրում դրանց պահպանության ու անվթարության ապահովման համար եւ պարտավոր են կատարել հուշարձանների պահպանության ու օգտագործման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

Այդ պայմանները չկատարելու դեպքում՝

ա) հուշարձանն օգտագործման տրամադրողն իրավասու է վաղաժամկետ դադարեցնել վարձակալական պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

բ) հուշարձանի սեփականատերը, լիազորված մարմինը, պետական կառավարման տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմինն իրավասու են դատական կարգով զանգատարկելու օգտագործման իրավունքը եւ պահանջելու օգտագործողի մեղքով հուշարձանին հասցված վնասի հատուցում:

Օգտագործման իրավունքը կարող է նաեւ դադարեցվել, եթե 3 տարվա ընթացքում հուշարձանը չի օգտագործվում համապատասխան պայմանագրում նշված նպատակով:

ՀՈՂՎԱԾ 41. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՈՎԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Հուշարձանները կամ դրանց ֆոտոպատկերները, տեսապատկերները կամ գծապատկերները գովազդային նպատակով որպես խորհրդանիշ, պիտակ, հուշանվերների եւ այլ ապրանքների արտադրության համար օգտագործելը կատարվում է սեփականատիրոջ համաձայնությամբ:

Հուշարձանները զբոսաշրջիկության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջիկային կազմակերպությունները համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ:

Նշված նպատակներով հուշարձանների օգտագործման կարգը եւ պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ IX

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 42. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

- Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառը ֆինանսավորվում է՝
- ա) պետական եւ համայնքի բյուջեների միջոցներով.
 - բ) հուշարձանների սեփականատերերի եւ օգտագործողների միջոցներով.
 - գ) մշակութային, հասարակական եւ այլ կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներով.
 - դ) օրենքով չարգելվող այլ միջոցների հաշվին:

ՀՈՂՎԱԾ 43. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

- Պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվում են՝
- ա) հուշարձանների պետական հաշվառման, հետազոտման, գիտատեղեկատու եւ քարոզչական աշխատանքները.
 - բ) պետական սեփականություն համարվող հուշարձանների պահպանության, անվթարության ապահովման՝ ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքները:
- Պետական բյուջեի միջոցներով անհրաժեշտության դեպքում ֆինանսավորվում են նաեւ ոչ պետական սեփականություն համարվող հուշարձանների անվթարության ապահովման՝ ամրակայման եւ վերականգնման աշխատանքները:
- Պետական բյուջեից կարող են ֆինանսավորվել նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական հուշարձանների գիտական հաշվառման, ուսումնասիրման եւ դրանց պահպանությանը նպաստող այլ աշխատանքներ:

ԳԼՈՒԽ X

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՀՈՂՎԱԾ 44. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ՍԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՆՏԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, հետախուզության եւ հնագիտական պեղումների, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման՝ օրենսդրությամբ սահմանված կարգը չպահպանելու, ինչպես նաեւ հուշարձանների պահպանության եւ օգտագործման՝ օրենսդրության այլ խախտումների համար մեղավոր իրավաբանական եւ ֆիզիկական անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 45. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ

Հուշարձաններին կամ դրանց պահպանական գոտիներին վնաս պատճառած իրավաբանական եւ ֆիզիկական անձինք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ XI

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 46. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

ԳԼՈՒԽ XII

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹ

ՀՈԴՎԱԾ 47. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել "Պատմության եւ կուլտուրայի հուշարձանների պահպանության եւ օգտագործման մասին" Հայկական ՍՍՀ օրենքը եւ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի 1977 թվականի դեկտեմբերի 21-ի "Պատմության եւ կուլտուրայի հուշարձանների պահպանության եւ օգտագործման մասին" Հայկական ՍՍՀ օրենքի կիրարկման կարգի մասին" որոշումը:

12 դեկտեմբերի 1998 թ.
ՀՕ-261